Պարույր Սևակ

Այդ մենք ենք գալիս

Դու երկիր իմ, մայր, ընթացքով որոշ,
Դու լեռնացում՝ մեր բարդ արևի ներքո,
Դու մութ աշխարհների հրացոլք դրոշ
Բոլոր մերկ դարերի մերկությունը ներկող...
Քեզ գալիքի ինչքա՜ն պայծառ վարդեր,
Քեզ գալիքի ինչքա՜ն, ինչքա՜ն օրեր խնդուն,
Դու, որ այսօր վաղվա ճանապարհդ ես հարթել,
Դու, որ գիտես այնպես գոտեմարտել անդուլ:
Դու, որ գիտես քայլել ուղիներում բոլոր,
Քայլել ինչպես խոյանք ու կարմիր գաղափար,
Դու, որ ունես աճում՝ մեռնողին մահ բերող
Եվ արև հրափայլ -
Հանել էիր դու լայն աշխարհներում անծիր
Ապագայի հազար, բյուր սերմնացաններ,
Որ նոր մի եռանդով վաղը ելնես հնձի
Աշխարհներում բոլոր՝ գոսկան ու անէ:
Տալիս էիր դու ուժ՝ թույլերին աշխարհում
Ու կործանում նրան՝ թույլածին Հերային,
Դո՛ւ, հմայիչ՝ ինչպես կրակը անտառում,
Սանձահարող՝ փոշի կրքերն հեղեղային:
Հանել էիր դու քո նժույգները բոլոր

Հաղթանակի հանդեպ ինքնավստահ,
Գիտենալով հանդերձ՝ չի գա թավալգլոր
Նա իր հեշտանքների հրեղենը նստած...
Ու բորբոքում էիր հազար հոգու կրակ,
Քանդում հազար օղակ՝ սառնությանն առընթեր
Ու հղանում երգեր՝ անդեմ, անկերպարանք՝
Պայծառ կերպավորված գալիքի հանդեպ...
Բայց արդ, հին սպառուն՝ կապիտալի ծնունդ,
Ֆաշիզմը՝ շուկայի տոփոտ Իշտար,
Եկել է հեշտանքով, կրքերով իր թունդ...
Գգվելու քո հողին՝ ազատ, անիշխան...
. . . . . .
. . . . . .
Եկել է, ելնի թող, ուրեմն նա -
Ֆաշիզմը՝ լքված կուրտիզանուհի,
Գիտեմ, որ շուտով ոչինչ կմնա
Այն խոլ կրքերից բորբոսնած ու հին:
Մենք բյուր ենք այսօր, միլիոն ու ավել,
Միլիարդ ենք էլի, աշխարհում համայն
Մեզ ո՞վ կարող է բերել մահ, ավեր,
Ծաղկուն երկիրը դարձնել ամա...
Արդ ուժեղ ենք մենք, զորեղ ենք հիմա
Ու հաղթանակի հույսն ենք փայփայում,
Մենք, ճաշակելով դառնություն ու մահ,
Պայծառ օրերը վաղվան ենք պահում:
Ինչպես պահում ենք հավատը մեր վառ
Մեր հաղթանակի ու վաղվա հանդեպ,
Մենք - միլիոններս իրար հետ մերված,
Մեր դասակարգը - հոծ ու բազմադեմ...
Այսօր հնչում է շեփորը ռազմի -

Ե՛լ, անվախ ընկե՛ր, ե՛լ, մարտի ելնենք,
Ե՛լ, ելնենք դաշտը գոռ պատերազմի -
Կռվենք քաջի պես, քաջի պես մեռնենք...
Այսօր կանչում է հայրենիքը քեզ,
Քեզ, անվախ եղբա՛յր, վերցրու հրացան,
Դո՛ւ, ե՛ս, նա՛ պիտի երկիրը փրկենք,
Մեր հայրենիքը՝ հուր ու հրացան...
Շեփորն է հնչում, թմբուկն է թնդում -
Ե՛լ, անվախ հոգի, բազուկ դու կարող,
Առա՛ջ, ընկերնե՛ր... մարտական գնդում
Կարգ ու դիսցիպլին... ո՛չ մի խանգարող:
Լսի՛ր դու, վախկոտ քչփչան պառավ,
Անդեմ նապաստակ, մկիկ խորշերի...
Առա՛ջ, ընկերներ, այդպես միշտ առաջ -
Խփի՛ր ֆաշիստին գարշ ու գարշելի...
Դո՛ւ, խավար ուժի անգիտող բանակ,
Դո՛ւ, խեղճ խեղկատակ քո տիրոջ ձեռքին,
Մի՞թե կարծել ես քեզ ահեղ դանակ
Եվ մեզ թույլ դմակ՝ քո զորեղ ձեռքին:
Կարծել ես դու մեզ երևի մի խեղճ
Չեխիա, որ ճըչա թաթերիդ ներքո,
Դո՛ւք, խեղկատակներ, ձեր տերը տըխեղծ՝
Ձեր մերկությունը գարշությամբ ներկող...
Դողա՛ դու այժմ, բանակ եղկելի,
Ե՛վ վիսաբարո, և՛ ամբարտավան,-
Ձեր անցած ու նոր հազար մեղքերի
Գոռ հատուցումը բերում ենք ահա...
Մենք - կոփվածներս կարիքի բոցում,
Մենք, որ դարերով ստրուկ ենք եղել,
Մենք, որ դարերով բռնության ծոցում

Ի հաճույս նրա արյուն ենք հեղել:
Մենք, զավակներս հին զրկանքների,
Մենք, քաղցածներս և՛ մերկ, և՛ անտուն,
Մենք՝ շախտյորներս մթին հանքերի,
Մենք - ճնշվածներս պապական հանդում:
Մենք, որ երեկ հին աշխարհը քանդում
Ու շինում էինք նորը նրա տեղ,
Մենք, որ մեր շղթան գցեցինք բանտում
Եվ դարձանք ընդմիշտ ազատ, լայնաթև,
Մենք, այսօր ահա, վտանգի ահեղ
Սպառնալիքի ժամին ահալի
Ինչպես լեռներից հորդացող հեղեղ՝
Այդ մենք ենք գալիս...
Այդ մենք ենք գալիս... մենք մեր աշխարհի
Զավակները բյուր, բանակները հոծ,
Բազուկով հսկա, հոգով միշտ արի,
Ձեր մթի հանդեպ՝ որպես պայծառ բոց:
Այդ մենք ենք գալիս... այն պատրաստակամ,
Այն կենսավարար հուժկու պատանին,
Որ բերում է քեզ, քո կրքին անգամ
Ոչ բեղմնավորում, այլ այն մատանին,
Այլ այն մատանին, որ հեքիաթներում
Ծովի անդունդն է տանում հրեշին,
Վատնում է ուժը առանց հատնելու,
Փոխարկում ուժը լուծված վրեժի...
Իմ մայր հայրենիք, իմ լուսե եզերք,
Քո կանչով ահա, կոչով քո արի
Ընդդեմ թշնամու՝ եզերքից եզերք,
Զավակները քո - նրա՛նք են գալիս...

14.VII.1941թ.

Յաւուրց Պոեմ